Տ. ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՇԻՇՅԱՆ

Ծնվել է 1935 թ. Ալեքսանդրետ քաղաքում: Ավագանի անունը եղել է Նուբար: Նախնական կրթությունն ստացել է Բեյրութի ազգային վարժարանում, ապա շարունակել է իր ուսումը նույն քաղաքի Հ. Բ. Ը. Միության Հովակիմյան-Մանուկյան միջնակարգ դպրոցում:

1949 թ. ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքը, որի լրիվ դասընթացն ավարտել է 1955 թ.: Այնուհետև, որպես ուսուցիչ, որոշ տարիներ պաշտոնավարել է սփյուռքահայ տարբեր կրթական հաստատություններում՝ Անթիլիասի նախակրթարանում, Դամասկոսի ազգային վարժարանում, ապա նաև Երուսաղեմի Թարգմանչաց վարժարանում՝ դասավանդելով հայագիտական մի շարք առարկաներ: Երուսաղեմում գտնվելու շրջանում վարել է նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ «Սիոն» ամսագրի տնօրինությունը՝ մաս կազմելով հիշյալ ամսագրի խմբագրությանը:

1959 թ. Կահիրեի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ երջանկահիշատակ Տ. Մամբրե արքեպ. Սիրունյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ վերանվանվելով Տ. Վազգեն աբեղա: Որպես հոգեվորական, երիտասարդ հայր սուրբը այնուհետև երկու տարի վարել է Եթովպիայի և նրա շրջակայքի հայոց հոգևոր հովվի և առաջնորդական փոխանորդի պաշտոնները:

1961—1968 թվականներին ծառայել է Մարսելում որպես տեղի հայոց հոգևոր հովիվ ու նաև որպես ներկայացուցիչը Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատմիրակ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի: Մարսելում Տ. Վազգեն աբեղայի հոգևոր ծառայության տարիները եղել են բեղուն և արդյունավետ: Այս շրջանում նրա նախաձեռնությամբ ու ջանքերով նորոգվել են երկու եկեղեցիներ. կառուցվել են երկու հովվատներ և եկեղեցու սրահներ: Իր հովվական և եկեղեցական աշխատանքներին զուգահեռ, Տ. Վազգեն աբեղան 1962—1965 թվականներին կանոնավոր կերպով հետևելով Էքս-ան-Պրովանսի համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության դասընթացներին, ավարտել է համալսարանը փայլուն հաջողությամբ՝ ձեռք բերելով բարձրագույն մասնագիտական կրթություն: Իր շրջանավարտության առիթով, 1965 թ. սեպտեմբերի 13-ին, Տ. Սերովբե արքեպիսկոպոսից ստացել է վարդապետական աստիճան և ծաղկյա մանուշակագույն փիլոն կրելու իրավունք:



1968 թ. հայր սուրբը պաշտոնավարության է մեկնել Միացյալ նահանգներ, որտեղ ավելի քան տասը տարի մեծ եռանդով ու նվիրումով հաջորդաբար ծառայել է Սաութ Միլվոքիի, Նիագարա Ֆոլսի, Ս. Քեթրինգի, Լորանսի և Պրովիդենսի հայոց եկեղեցական համայնքներում որպես հոգևոր հովիվ:

1976 թ. հուլիսի 11-ին ԱՄՆ-ի հայոց արե-

վելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանից ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան:

1979 թ. նշանակվել է առաջնորդական փոխանորդ Կանադայի հայոց թեմի:

1983 թ. Տ. Վազգեն ծ. վարդապետը ընտրվել է Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի թեմական խորհրդի անդամ և նույն տարվա սեպտեմբերի 3-ին ստանձնել է Կանադայի հայրապետահաստատ նոր թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնը, որը վարել է ձեռնհասությամբ: 1984 թ. հոկտեմբերի 6-ին Կանադայի հայոց պատգամավորական Բ ժողովը միաձայնությամբ նրան ընտրել է կանադահայոց առաջնորդ:

1984 թ. հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրվել և օծվել է եպիսկոպոս կանադահայ թեմի վրա, իբրև առաջին թեմական առաջնորդ:

Տ. Վազգեն եպիսկոպոսը Հայ Եկեղեցու շնորհալի հոգևորականներից է՝ օժտված գրական և վարչական ձիրքերով: Աշխատակցել է սփյուռքահայ մի շարք թերթերի և պարբերականների: